ԱՐՑԱԽՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ
ՄԻՀՐԱՆՅԱՆ ՏՈՀՄԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՍՎԱՋՅԱՆ Հ. Ս.

821 թ. Դադոյի կամ Դադի վանքի ձորում (Խորաձորում)[1] իր ազգական Ներսեհ Փիլիպյանի կողմից որդու՝ Ստեփանոսի հետ միաժամանակ սպանվում է Միհրանյան տոհմի վերջին իշխան Վարազ-Տրդատ Գ-ն: Սպանվածի կինը ողջ մնացած դստերը՝ Սպրամին, փրկելու նպատակով «գիշերահէն տաժանելի ուղևորութեամբ» փախչում, ապաստան է գտնում Խաչենի բերդում, որտեղ էլ աղջկան ամուսնացնելով տեղի իշխան, Առանշահիկ Սահլ Սմբատյանի որդու՝ Ատրներսեհի հետ[2] ու կրկին խնամիանալով Առանշահիկներին[3], միմյանց է կապում երկու տոհմերը: Այս դիպվածով Միհրանյանները դուրս են գալիս պատմության ասպարեզից: Նրանց հետ վերանում է նաև աշխարհագրորեն «Աղվանք» կոչվող Հայոց Արևելից կողմանց միասնական իշխանությունը: Երկրամասի զանազան մասերում բարձրանում են առանձին ավատական տներ և իրենց տիրապետությունն հաստատում նրա տարբեր շրջաններում: Միհրանյաններից հետո,- գրում է Ղևոնդ Ալիշանը,- «քակտեցաւ իշխանութիւնն տանն Աղուանից (իմա Հայոց Արևելից կողմանց - Ս. Հ.) և բռունք տիրացան ի վերայ գաւառաց»[4]: Աղբյուրների տվյալների համաձայն, Ուտիքի Գարդման և Տուս գավառներում առաջանում են համապատասխանաբար Կտրիճ և Ստեփանոս Կոն պայազատների, Արցախի հյուսիսում, ի դեմս Սահլ Սմբատյանի՝ Առանշահիկնե-րի, միջնարցախում՝ Աբլ Ասաղ կոչված Ստեփանոսի, իսկ հարավում՝ վերջինիս քրոջ որդու՝ Եսայի Աբու Մուսեի իշխանությունները: Իրենց մանր իշխանություններն են հաստատում նաև այլ ավատատիրական տներ, որոնք, սակայն, երկրի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում չունեին այնքան դերակատարություն, որքան վերը նշվածները:

Առանշահիկների իշխանությունը, Սահլ Սմբատյանի գլխավորությամբ, տարածվում էր նահանգի Մեծառանք (Մեծիրանք), Մեծկուենք, Քուստի Փառնես, Վայկունիք (Ծար), Բերդաձոր գավառների և Մյուս Հաբանդ գավառի մի մասի վրա՝ Ամարասի հետ միասին: Թովմա Արծրունու հաղորդմամբ, Սահլ Սմբատյանը նաև Շաքիի տերն էր[5], որ

---

[1] *Այժմյան ԼՂՀ-ի Մարտակերտի շրջանում:*

[2] **Մովսես Կաղանկատուացի,** *Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բընագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի (այսուհետև՝ Կաղանկատուացի), Ե., 1983, էջ 340:*

[3] *Միհրանյաններն առաջին անգամ խնամիացել էին Առանշահիկների հետ՝ փեսայացնելով Զարմիհր Առանշահիկին (տե՛ս նույն տեղում, էջ 172):*

[4] **Ղևոնդ Ալիշան,** *Աղուանք (Բազմավէպ, 1970, N 11-12, էջ 350):*

[5] **Թովմա Արծրունի եւ Անանուն,** *Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի),Ե., 1985, էջ 298:*

Կուրի ձախակողմյան տարածքում էր: Հաղորդումը, որ թույլ է տալիս մտածելու, թե անդրկուրյան տվյալ շրջանը ևս Սահլի ենթակա տիրույթներից էր, պատմագրության մեջ սուր բանավեճերի տեղիք է տվել: Ուսումնասիրողներից Հ. Քյուրտյանը, Ս. Գ. Բարխուդարյանը, Ա. Եղիազարյանը և ուրիշներ, հավատալով պատմիչին, այն ընդունել են որպես հավաստի տեղեկություն և, ավելի առաջ գնալով, Կուրի ձախափնյա շրջանները համարել Սահլի բուն տիրույթ[6]: Զ. Բունիաթովը, ելնելով հայկական տարածքների յուրացմանն ուղղված իր մեկնակետից, ճիշտ է համարում Թովմա Արծրունուն և ասում, որ հայ պատմիչի հիշատակած Շաքին ոչ թե հայտնի Շաքի-Նուխին է, այլ Սիսիանի տարածաշրջանում այսօր էլ գտնվող Շաքի բնակավայրը[7]: Այսպես մեկնաբանելով ու Սահլ Սմբատյանին էլ համարելով «աղվան» իշխան՝ նա ուզում է ցույց տալ, որ Սյունիքը Աղվանքի մարզերից մեկն էր և գտնվում էր վերջինիս իշխանների տիրապետության ներքո: Ֆ. Մամեդովան նույնպես Շաքիի տեր ու տիրակալ է համարում Սահլ Սմբատյանին, սակայն, այդ ոչնչով չի հիմնավորում[8]: Ըստ Ն. Ադոնցի, քննարկվող հաղորդումը այնքան էլ վստահելի չէ[9], իսկ ըստ Բ. Ուլուբաբյանի, ուղղակի թյուրիմացություն է[10]: Ա. Հակոբյանը խնդրի լուծումը տեսնում է Շաքեոյ տէր»-ը «Խաչէնոյ տէր» բառակապակցությամբ փոխարինելու մեջ[11]: Հարցի կապակցությամբ կատարած մեր պրպտումները ցույց են տալիս, որ Արծրունյաց տան պատմիչը միակն է Սահլի մասին խոսող հայ պատմիչներից ու արաբ մատենագիրներից, որ նրան Շաքիի տեր է հայտարարում: Մյուսներն այդ մասին ակնարկ անգամ չունեն: Ուստի մենք ևս հակված ենք ենթադրելու, որ այստեղ գործ ունենք ակնհայտ վրիպակի հետ, որի հայտնվելը Արծրունու աշխատությունում պարզաբանման կարիք ունի: Հետևաբար, մնում է միայն ընդունել այն իրողությունը, որ Սահլ Սմբատյանի տիրապետությունը սահմանափակվում էր Արցախի՝ նշված շրջանակում: Իշխանության կենտրոնը Խաչեն անմատչելի ամրոցն էր՝ Մեծառանք գավառում, որի անունով էլ, ինչպես հիշյալ գավառը, այնպես էլ Առանշահիկների իշխանությունը, ստանում է «Խաչեն» անունը և պատմության մեջ սկսում «Արցախ» անվան հետ հանդես գալ այդ անվամբ, իսկ որոշակի դեպքերում էլ ամբողջովին փոխարինել նրան:

---

[6] **Քիւրտեան Յ.,** *Բաբակ եւ Սահլ իպն Սնբատ (էջ մը մեր իններորդ դարու պատմութենէն) [(Բազմավէպ, 1958, N 1-7, էջ 76),* **Բարխուդարյան Ս. Գ.,** *Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները, IX-X դարերում (Պատմա-բանասիրական հանդես, 1971, N 1, էջ 63],* **Եղիազարեան Ա.,** *Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ (Հանդէս Ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2009, էջ 145 և հաջ.):*

[7] **Буниятов З.** *Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, с. 187.*

[8] **Мамедова Ф.** *Кавказская Албания и албаны, Баку, 2005, с. 403.*

[9] **Ադոնց Ն.,** *Բագրատունյաց փառքը (Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 508, ծանոթ. 4):*

[10] **Ուլուբաբյան Բ.,** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 72:*

[11] **Յակոբեան Ա.,** *Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում (Հանդէս Ամսօրեայ, 2010, էջ 81):*

Պիանք, Հարձլանք, Մուխանք գավառներն ամբողջությամբ, Մյուս Հաբանդ գավառի մնացած մասը՝ սրանից հարավ ընկած շրջաններով (հետագայի Դիզակ-Վարանդայի ընդգրկած տարածքը), անցնում են Եսայի Աբու Մուսեի՝ ժամանակի ոչ պակաս ազդեցիկ իշխանի, ենթակայության տակ: Նա տիրում էր հզոր Քթիշ ամրոցին, որը գտնվում է ԼՂՀ-ի Հադրութի շրջանում, Տող և Տումի գյուղերի մոտ, նույնանուն լեռան վրա: Ամրոցը աղբյուրներում հանդիպում է նաև Գտիչ անվանաձևով, որով կոչվել է և վանքը՝ Գտիչ: Եսայի Աբու Մուսեի նստավայրը Տումի գյուղն էր:

Նշված իշխանությունների միջև ընկած շրջանները, մասնավորապես Ուռեաց գավառակը՝ Կառնակաշ, Հակարի ու Տափատ ավաններով, գտնվում էին Եսայի Աբու Մուսեի քեռու՝ իշխան Ստեփանոս Աբլ Ասադի տիրապետության տակ:

Անշուշտ, այս իշխանությունների համար նշված սահմանները կայուն և անփոփոխ չէին մնում: Քաղաքական ու պատմական այլևայլ անցքերի կամ առանձին իշխանների նկրտումների հետևանքով, դրանք հաճախ էին ընդարձակվում կամ նեղանում: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, Առանշահիկ իշխան Սահլ Սմբատյանը «բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառսն Գեղամայ»[12] և այն պահում էր իր ենթակայության տակ: Սահլի թոռ Գրիգորը «շինէ զՀաւախաղացին բերդն և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»[13], իսկ Եսայի Աբու Մուսեն քեռու՝ Աբլ Ասադի սպանությունից հետո տիրում է նրա կալվածքներին, մի քանի այլ գավառների ու ընդարձակում իր իշխանության սահմանները: Այսպիսի սահմանային փոփոխությունները, որոնք շարունակական բնույթ էին կրում, այլ ելք չեն թողնում ուսումնասիրողին, քան դրանք մոտավոր ճշտությամբ տալը:

Այս հայկական տերությունների մեջ երկրամասի քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում առանձնահատուկ դեր էր կատարում Առանշահիկների իշխանությունը՝ համանուն հարստության գլխավորությամբ:

VI դ. վերջերին, զիջելով Միհրանյաններին, Առանշահիկները հեռանում են քաղաքական ասպարեզից, սակայն վերջիններիս երկդարյա տիրապետության անկումից հետո կրկին վերադառնում են և իրենց գերակա դիրքը վերահաստատում երկրամասում: Առանշահիկների վերելքն այս շրջանում կապված է Սահլ իշխանի (Սահլ իբն Սմբատ, Սահլ իբն Շամբատ, Սահլ իբն Սիմբատ, Սահլ իբն Սինբաթ ալ-արմանի) անվան հետ: Նա, ըստ Հ. Քյուրտյանի, ծնված պետք է լիներ 790 թ.[14] և իշխանության գալով IX դ. 20-ական թվականներին (ամենայն հավանականությամբ՝ 821 թ.), իշխում մինչև 852 թ.:

Սահլ Սմբատյանը Առանշահիկ էր, Հայկի սերունդներից, ինչպես Կաղանկատվացին է ասում «էր ի տոհմէն Հայկայ»[15], որ նշանակում է, թե նա հայկական ծագում ուներ:

---

[12] **Կաղանկատուացի,** *էջ 340:*

[13] *Նույն տեղում:*

[14] **Քիւրտեան Ց.,** *նշվ. աշխ., էջ 77:*

[15] **Կաղանկատուացի,** *էջ 340:*

Նրա հայկական ծագումն ու Առանշահիկներին պատկանելը պատմիչն ընդգծում է ևս մի քանի անգամ[16]: Կաղանկատվացու տեղեկությունները հաստատվում են նաև արաբ մատենագիրների հաղորդումներով[17]: Սրանց համահուն չէ և Միքայել Ասորու համանման տեղեկությունը, որում Արցախի մեծ իշխանը ներկայացված է իր լրիվ անվամբ՝ «Սահակ», և նշված է նրա «Հայկազուն» լինելու փաստը: «Անկաւ (Բաբէկը - Ս. Հ.),- գրում է Միքայել Ասորին,- յերկիրն Հայկազնոյն Սահակայ… և Սահակ իշխանն Հայկազուն ընմբռնեաց (զնա - Ս. Հ.)»[18]: Չնայած սկզբնաղբյուրների այսքան պարզորոշ վկայություններին, այնուամենայնիվ, բոլոր ուսումնասիրողները չէ, որ ընդունում են նրա հայ լինելը կամ էլ ընդունելով դա, նրան վերագրում են այլ՝ Բագրատունիական դինաստիական պատկանելություն: Միանգամայն հասկանալի է, որ առաջին խմբին պատկանում են աղրբեջանցի հեղինակները Զ. Բունիաթովի գլխավորությամբ: Հարցի առնչությամբ վերջինիս ու նրա համախոհների հայտնած դատողություններին արդեն անդրադարձել ենք[19] և ավելորդ է այստեղ կրկնել դրանք, ուստի անցնենք մյուս հարցի քննարկմանը:

Զգալի է այն ուսումնասիրողների թիվը, որոնք հակված են կարծելու, որ նա Բագրատունի էր: Նրանց մեջ կան թե հայ և թե օտարազգի ճանաչված հեղինակներ[20]: Հատկանշական է, որ այդպես կարծող ուսումնասիրողներն իրենց այդ տեսակետը հաստատող քիչ թե շատ հիմնավոր փաստեր չեն բերում: Ն. Ադոնցը, օրինակ, գրում է. «Կաղանկատվացու խոսքը, թե Սահլ Եռանշահիկ և կամ Զառմիհրական տոհմից էր, արժեք չունի»[21], և հիմք ընդունելով նրա հոր անունը՝ Սմբատ, որն, ըստ մեծանուն գիտնականի, հատուկ է միայն Բագրատունիներին, նրան համարում է վերջիններիս տոհմակիցը[22]: Ն. Ադոնցի հետևությամբ, նման կարծիք է հայտնում նաև Ս. Բարխուդարյանը[23]: Հարցի պարզաբանմամբ հանդես է եկել և Բ. Ուլուբաբյանը: Կաղանկատվացու տեղեկությունների մանրամասն քննությամբ և Բագրատունիների ու նրանց ճյուղերի մասին մատենագիտական հաղորդումների հետ դրանց համադրությամբ, նա մերժում է Սահլի՝ Բագրատունի լինելու մասին

---

[16] *Նույն տեղում, էջ 326, 330, 172:*

[17] *Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, Հավաքեց և թարգմանեց Բագրատ Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 95, 119 (այսուհետև՝ Արաբացի մատենագիրներ),* **Իբն ալ-Ասիր,** *Լիակատար պատմություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 142-143 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր):*

[18] *Ժամանակագրութիւն Տեառն Միխայիլի Ասորւոց պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871, էջ 365 (այսուհետև՝ Միքայել Ասորի):*

[19] **Սվազյան Հ.,** *«Ուշ աղվանների» առասպելը (Վեմ, 2009, N 3, էջ 129-140):*

[20] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 65, ծան. 49 և էջ 66,* **Бархударян С. Г.** *Саhл Смбатян Багратуни-князь Хаченский (Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Е., 2011, с. 56-72):*

[21] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., էջ 509:*

[22] *Նույն տեղում:*

[23] **Бархударян С. Г.** *նշվ. աշխ., էջ 56-72:*

ուսումնասիրողների կարծիքը և ցույց տալիս, որ Սմբատի որդին, բացի Առանշահիկ լինելուց, այլ տոհմական պատկանելություն չէր կարող ունենալ[24]: Մեր կարծիքով էլ, Սահլը Առանշահիկ է: Նման միտք հայտնելու համար մեզ հիմք են ծառայել նրա Առանշահիկ լինելու մասին Կաղանկատվացու ուղղակի հաղորդումները, որոնք ոչ թե ի միջի այլոց ասված խոսքեր են, այլ հենց նրան վերաբերող մեկից ավելի հստակ տեղեկություններ[25]:

Այսպիսով, Սահլ Սմբատյանը (Սահակը) Առանշահիկ էր կամ Զարմիհրական տոհմից[26], որ նույնն է, թե հայ էր և իշխում էր Հայոց Արևելից կողմերում: Նա «էր տէր Սիւնեաց (Փոքր Սյունիքի, այն է՝ Արցախի - Ս. Հ.)» և «բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[27]: Նրա գլխավորությամբ Արցախում վերընձյուղվում է մի իշխանություն, որի տիրակալները, ժառանգական իրավունքով հաջորդելով միմյանց, իշխում էին այնտեղ: Ժամանակի ընթացքում ճյուղավորվելով՝ նրանք իրենց նոր իշխանություններն են կազմավորում երկրի տարբեր մասերում[28]:

Արցախի ճանաչված իշխաններից էր Ստեփանոսը, որն անվանվում էր նաև Աբլ Ասադ: Նրա իշխանությունը, ինչպես արդեն ասել ենք, տարածվում էր միջնարցախյան գավառների վրա: Ինքը՝ Աբլ Ասադը, Եսայի Աբու Մուսեի մոր եղբայրն էր և այնքան ճանաչված էր, որ աղբյուրները Եսայի իշխանի հոչակն էլ ավելի բարձրացելու նպատակով, հատկապես շեշտում էին այդ հանգամանքը՝ Կաղանկատվացին «քեռորդի Աբլ Ասադայ»[29], իսկ արաբները՝ «Իսա իբն Յուսուֆ իբն ուխտ Իստիֆանուս (Հովսեփի որդի Եսայի՝ Ստեփանոսի քրոջ որդի)»[30] արտահայտչաձևերով: Հ. Քյուրտյանին թվում է, թե սույն իշխանը Վարազ Տրդատ Գ-ի որդի Ջուանշերիկն է, որն ունեցել է նաև Ստեփանոս Երկրորդ անունը և, համապատասխանաբար, նրան դիտում որպես մեկը Միհրանյան իշխաններից[31]:

Աբլ Ասադն այն հայ իշխաններից էր, որոնք համագործակցեցին Բաբեկի հետ՝ 826 թ. մասնակցելով Բաղքի սպանդին, բայց և ավելի ուշ զոհ գնալով բաղքեցիների[32] վրեժխնդրությանը[33]:

---

[24] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 65-70:*

[25] **Կաղանկատուացի,** *էջ 326, 330:*

[26] *Հմմտ.* **Cyril Toumanoff,** *Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 258, ծան. 362:*

[27] **Կաղանկատուացի,** էջ 340:

[28] *Սահլի տոհմածառի պատկերը մինչև X դ. վերջը (տե՛ս* **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 82), իսկ ուշ շրջանի (IX-XIII դդ.) իշխանների տոհմածառը՝* **Յակոբեան Ա.,** *նշվ. աշխ. (ներդիր աղյուսակը՝ 168-169 էջերի միջև):*

[29] **Կաղանկատուացի,** *նշվ. աշխ., էջ 340:*

[30] *Արաբացի մատենագիրներ, էջ 100:*

[31] **Քիւրտեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 134:*

[32] *Կաղանկատվացին նրանց « բաղականեցի□ է կոչում (էջ 327): Վերջիններս Սյունյաց նահանգի Բաղք գավառի բնակիչներն էին: Հմմտ. Ղևոնդ Ալիշան, Արցախ, Ե., 1993, էջ 17,* **Քիւրտեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 17,* **Ադոնց Ն.,** *Քննություն Մովսես Կաղանկատվացու (Երկեր, հ. Ա, էջ 476): Ֆ. Մամեդովայի համար նրանք □պավլիկյաններ» էին (տե՛ս նշվ. աշխ., էջ 393):*

Ամենայն հավանականությամբ, Ստեփանոս Աբլ Ասադը ժառանգներ չուներ, քանի որ նրա սպանությամբ վերջ է դրվում նաև նրա իշխանության ինքնուրույն գոյությունը: Ոտքի է ելնում հիշյալ Եսայի Աբու Մուսեն ու բաղականեցիներին դուրս քշելով քեռու տիրույթներից՝ դրանք միացնում է սեփական կալվածքներին ու լի- իրավ իշխում բոլորի վրա: «Տիրէր… մեծի կողմանն Աղուանից (կարդա՛ Հայոց Արևելից կողմանց) Ապումուսէ»,- գրում է Թովմա Արծրունին[34]:

Եսայի իշխանը (Եսայի Ապամուսե, Ապումուսե, Մուսե), որ արաբներին ծանոթ էր Իսա իբն Յուսուֆ, Իսա իբն Յուսուֆ իբն Իսթիֆանուս կամ Իսա իբն Յուսուֆ, իբն ուխտ Իսթիֆանուս (Հովսեփի որդի Եսայի՝ Ստեփանոսի քրոջ որդի) անվանաձևերով, նույնպես հայ էր, թեև ադրբեջանցի հետազոտողներն, իրենց ձևավորած միտումների համաձայն, նրան «աղվան» են համարում: Նա IX դ. երկրորդ կեսին արաբների դեմ ծավալած դիմադրական պայքարի առաջնորդներից էր, Քթիշ կոչված բերդի մատույցներում նրանց գրոհները խափանողը, ժամանակաշրջանի խիզախ մարտիկներից մեկը: Ուսումնասիրողները տոհմական տարբեր պատկանելություն են վերագրում նրան: Մ. Բարխուտարյանցը սույն զորականին սկզբնավորում է Միհրանյան Վարազ-Տրդատ Գ-ի ազգական Փիլիպեի որդուց՝ Ներսեհ Դժնդակից, որն, ըստ նրա, Դիզակում Միհրանյան մի նոր ճյուղի հիմքն էր դրել[35]: Եսայի Աբու Մուսեի արմատները դեպի Միհրանյաններն է տանում նաև Հ. Քյուրտյանը[36]: Ի տարբերություն հիշյալների, Բ. Ուլուբաբյանն անվերապահորեն կարծում է, որ նա Առանշահիկ է, սրանց դիզակյան ճյուղից[37]: Սակայն այս տեսակետները ավելին չեն, քան վարկածներ և չեն հաստատվում պատմությամբ: Նրան Միհրանյան ծագում վերագրողները ոչ մի փաստարկ չեն բերում ի հաստատումն իրենց կարծիքների: Մասնավորապես Մ. Բարխուտարյանցը, Դիզակ-Վարանդայի իշխանական տոհմածառը կազմելիս, այն սկսում է Վարազ-Տրդատ Գ-ի ազգական Ներսեհ Փիլիպյանով, ապա նշում Ներսեհ Դժնդակին ու անցնելով վերջինիս սերունդների թվարկմանը՝ որտեղից որտեղ վերցնում ու նրանց շարքում է դնում սույն Եսայի Աբու Մուսեին[38], հավանաբար կարծելով, թե դրանով լուծում է իշխանի Միհրանյան դինաստիական պատկանելության հարցը: Եվ դա անելիս նա չի էլ նկատում ժամանակի այն անհամապատասխանությունը, որն առաջանում է ցանկը գլխավորող Ներսեհ Փիլիպյանի ու իր կազմած տոհմացանկում հինգերորդ տեղում հայտնված Եսայի Աբու Մուսեի, տարեթվերի լեզվով արտահայտված՝ դարի 20-ական (երբ սպանվում է

---

[33] **Կաղանկատուացի,** *էջ 327:*

[34] **Թովմա Արծրունի,** *էջ 276:*

[35] **Բարխուտարեանց Մ.,** *Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 130-131:*

[36] **Քիւրտեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 133:*

[37] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 62:*

[38] **Բարխուտարեանց Մ.,** *նշվ. աշխ., էջ 131:*

Վարազ-Տրդատ Գ-ն, և Ներսեհ Դժնդակով սկսվում է Միհրանյանների կարծեցյալ երկրորդ ճյուղը) ու 40-ական թվականների (երբ վերջիններիս հինգերորդ սերունդը համարվող Եսայի Աբու Մուսեն լիիրավ իշխում էր ապագա Դիզակ-Վարանդայում) միջև: Առաջին իսկ թռուցիկ հայացքից էլ պարզ երևում է, որ ձգձգումներով ու հավելումներով հագիվ քառորդ դար ընդգրկող այս ժամանակաշրջանը շատ քիչ է հինգ սերունդ տեղավորելու համար, հանգամանք, որ խիստ կասկածելի է դարձնում պատվարժան եպիսկոպոսի տեսակետի հավանականությունը: Տեղին է ասել, որ խնդրո առարկա տոհմածառը կազմելիս Մ. Բարխուտարյանցը բաց է թողնում Եսայի Աբու Մուսեի հորը՝ Հովափ երեցին, որը, բնականաբար, լինելու էր նույն տոհմից, նաև պատմական անձ էր:

Հ. Քյուրտյանը, նախապատրաստվելով խոսել Եսայի Աբու Մուսեի մասին, նախ ներկայացնում է Միհրանյաններին՝ սերնդե-սերունդ, ապա անդրադառնում սույն իշխանին և ընթացքում Միհրանյան վերջին իշխաններից մեկի անունով նրան մերթընդմերթ կոչելով Եսայի Ստեփանոսյան՝ համարում, որ տվել է խնդրի լուծումը[39]: Սակայն, կարծում ենք, նման մոտեցումները ճիշտ չեն, ուստի և չեն տալիս ցանկալի արդյունքը: Ճիշտ չենք համարում նաև Եսայի Աբու Մուսեին Առանշահիկ համարելու՝ Բ. Ուլուբաբյանի միտումը: Չկան դա հաստատող փաստեր: Այդպիսիք չի բերում նաև ինքը՝ հեղինակը: Վերջինիս համար Եսային Առանշահիկ է, որովհետև, ըստ իր որդեգրած հայեցակարգի, Արցախում իշխող բոլոր տիրակալներն անխտիր պատկանում էին Առանի շահիկների տոհմին:

Այսպիսով, Եսայի Աբու Մուսեի տոհմական պատկանելության հարցը բաց է մնում և նորովի՝ փաստացի տվյալներով հագեցած լուսաբանում պահանջում: Անվիճելի է, սակայն, որ նա սերում էր հարավային Արցախի հինավուրց տոհմերից մեկից և, անկախ դինաստիական պատկանելությունից, հանդես էր գալիս հանուն իր իշխանության ազատ գոյատևման:

Եսայի Աբու Մուսեն քահանայի որդի էր՝ «երիցու որդի»[40], գրագետ անձնավորություն, նաև «այր խաղաղութեան»[41]: IX դ. 40-ական թվականներին միավորելով սեփական ու Աբլ Ասադ Ստեփանոսի՝ իրեն անցած տիրույթները, մի հզոր իշխանության և նոր իշխանատոհմի հիմքերն է դնում: Վերջինիս իր հիմնադրի անունով ամենայն իրավամբ կարելի է կոչել «Եսայան», իսկ իշխանությունը՝ այժմյան Տումի գյուղի տեղում (Հադրութի շրջան), Ամարասից հարավ գտնվող Գորոզ բերդի ու գավառի անունով՝ «Գորոզի իշխանություն»: Նորաստեղծ իշխանությանը այսպես

---

[39] **Քիւրտեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 132-134:*

[40] **Թովմա Արծրունի,** *էջ 276:*

[41] **Կաղանկատուացի,** *էջ 327:*

կոչելու իրավունք տալիս է այն փաստը, որ նրա տոհմակիցները IX-X դդ. հանդես են գալիս «Գորոզի իշխան» կամ «Գորոզոաց իշխան» տիտղոսներով[42]*:*

Հետագայում այստեղ բարձրանում է Դիզակ-Վարանդայի մելիքությունը:

Եսայան իշխանական տան հայրենի ոստանը շարունակում է մնալ Տումի գյուղը, որտեղ նրանց տիրապետությունը, ըստ Մ. Բարխուտարյանցի, տևում է մինչև 1271 թ.[43]*: Եսայի Աբու Մուսեն իշխում է մինչև 855 թ.՝ մինչև Բուղայի կողմից մյուս հայ իշխանների հետ գերվելը և Սամարա՝ խալիֆայության այն ժամանակվա մայրաքաղաք*[44]*, տարվելը: Այնուհետև նրա մասին ոչ մի տեղեկություն չկա, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ նա կամ վախճանվել էր աքսորավայրում, կամ այնտեղ պահվել որպես գերի: Այսպես թե այնպես, Գորոզի իշխանության հիմնադիրը չի վերադառնում, բայց և տոհմը նրանից հետո չի վերանում: Մեծ իշխանի սերունդները ժառանգելով իշխանության ղեկը և հաջողությամբ վարելով այն՝ մնում են որպես ազդեցիկ տերեր, որոնցից ոմանք նույնիսկ արժանանում են «թագավորի» բարձր տիտղոսի: Այդ մասին են վկայում նրանց իշխանանիստ Տումի գյուղի տարածքում և գերեզմանատանը հայտնաբերված հուշարձանները՝ ավանդաբար «թագավորական պալատ» կոչվող մի հին շինության ավերակներ, տապանաքար՝ «թագավորի գերեզման» արձանագրությամբ, մի աղբյուր՝ «թագավորի աղբյուր» անվամբ, Սոփի իշխանուհու թողած արձանագրությունը, որում նա եղբորը՝ Գագիկին, հենց «թագավոր» էլ կոչում է*[45]*: Արձանագրությունների, մատենագիտական տվյալների ու Եսայի Աբու Մուսեին տրվող անվանաձևերի հիման վրա Ս. Բարխուդարյանը կազմել է Գորոզ իշխանական տան տոհմածառը, որն ունի հետևյալ պատկերը.*

«1. Հովսեփ քահանա, ամուսնացած Ստեփանոս Աբլասադի քրոջ հետ.

2. Եսայի Ապու-Մուսե, գերի տարված 852 թ.

3. Մուսե, որդի նախորդի.

4. Եսայի, թոռ Եսայի Ապու-Մուսեի, հիշված 906 թ.

5. Գագիկ թագավոր, որդի նախորդի, 997-1000 թ. Քույրն է՝ Սոփի, նշվ. 1000 թ.»[46]*:*

Բայց ցանկում ընդգրկված իշխանների ապրած ու գործած տարիների ժամանակագրական քննությունից պարզվում է, որ այն մի շարք անճշտություններ է

---

[42] *Պատմութիւն* **Անանուն Զրուցագրի կարծեցեալ Շապհոյ Բագրատունի** *(История Анонимного Повествователя. псевдо-Шапух Багратуни, перевод с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Е., 1971, с. 189), նաև* **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի** *Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսավորչի աթոռոյն, Թուղթ Ա (այսուհետև՝* **Անանիա Մոկացի, Թուղթ Ա)** *(Արարատ, 1987, մարտ, էջ 144):*

[43] **Բարխուտարեանց Մ.,** *նշվ. աշխ., էջ 131:*

[44] *Սամարան խալիֆայության մայրաքաղաքն էր 836-892 թթ.:*

[45] **Բարխուտարեանց Մ.,** *Արցախ, Բագու, 1895, էջ 79-80, Դիվան հայ վիմագրության, պր. V, կազմեց Ս. Բարխուդարյան (այսուհետև՝ Դիվան), Ե., 1982, էջ 173: Նշված հուշարձանների նկարագրությունը տե՛ս* **Բարխուտարեանց Մ.,** *Արցախ, էջ 79-80:*

[46] **Բարխուդարյան Ս. Գ.,** *նշվ. աշխ., էջ 57:*

պարունակում և ամբողջական չէ: Նրանից դուրս են մնացել Եսայի Աբու Մուսեի տոհմակիցներ, որոնք ոչ միայն շարունակել են մեծ իշխանի սերունդը, այլև իրենց գործունեությամբ հիշատակության արժանի գործեր են թողել տոհմի պատմության մեջ[47]:

Եսայի Աբու Մուսեն ունենում է մեկ որդի՝ Մովսեսը, որի անունը պահպանվել է հոր արաբական անվանաձևում՝ Աբու Մուսե՝ Մովսեսի հայր, իմաստով: Տաբարի արաբ մատենագրի փոխանցմամբ, Եսային Սամարա էր տարվել հոր ու որդու հետ[48]: Որդու անունը չի նշվում, բայց հավանական է, որ նա իշխանի միակ որդի Մովսեսն էր, որն, ինչ խոսք, նույնպես գտնվելու էր Քթիշի պաշտպանների շարքում՝ հոր կողքին և նրա հետ էլ կիսելու էր իրենց բաժին հասած ճակատագիրը: Կարելի է ենթադրել, որ Մովսես իշխանը, ի տարբերություն հոր, 857-859 թթ. մյուս աքսորված հայ իշխանների հետ ազատվելով գերությունից և վերադանալով հայրենիք, զբաղեցնում է հոր աթոռը:

Մովսես իշխանի գործունեության մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Նրա կառավարման տարիներն անցնում են արաբական տիրապետության համեմատական թուլացման, հայ իշխանների իրավունքների ընդլայնման և անդորրության պայմաններում, և նա իշխանության գլուխ անցնելով՝ իր կյանքն ավարտել է խաղաղությամբ:

IX դ. վերջերին հայ մատենագրության մեջ հիշատակվում է Վասակ անունով մի իշխան, որը Գորոզի տերն էր և Հայոց արքա Սմբատ Ա-ի (890-914 թթ.) բանակի կազմում, իր մեծաթիվ հեծելազորով կռվում էր Եգերաց (Աբխազաց) թագավոր Կոստանդինի դեմ ի պաշտպանություն նրա կողմից գահազուրկ արված վրաց Ատրներսեհ թագավորի: Վերջինիս ցույց տված այս ռազմական օգնության մասին պատմում են հայ պատմիչներ Հովհ. Դրասխանակերտցին[49], Ասողիկը[50] և Անանուն Զրուցագիրը[51]: Գորոզի իշխանին, սակայն, հիշատակում է միայն Անանունը և տալիս նրա անունը՝ Վասակ: Ըստ պատմիչի, գահը վերստանալու գործում Ատներսեհին օգնում են «Իշխան յԱրևելից Սմպատ բազում զաւրաւք իշխան Փառիսոյ Հրմաեկ բազում հեծելաւք, …իշխան Գորոզվայ Վասակ բազում հեծելաւք… և …այլք բազումք»[52]: Փաստը, որ համահավաք բանակը գլխավորել է Հայոց արքա Սմբատ Ա-ն, ցույց է տալիս, որ հայ-վրաց- աբխազական պատերազմը տեղի է ունեցել նրա օրոք՝ 890 թվականից հետո, և այդ ժամանակ Գորոզում իշխում էր հիշյալ Վասակը: Դժվար չէ

---

[47] *Ս. Բարխուդարյանի՝ վերջերս առանձին հրատարակված աշխատությունների շարքում զետեղված է նաև Եսայի Աբու Մուսեին նվիրված նրա հետազոտությունը՝ "Есайи Абу Мусэ-князь Дизакский" վերնագրով (տ՛ես նշվ. աշխ., էջ 50-55), որում, չնայած վերանայված է սույն տոհմ* Бархударян С. Г. *ացանկը, բայց մնացել է նոր մատենագիտական տվյալներով այն ճշգրտելու և լրացնելու անհրաժեշտությունը:*

[48] *Արաբացի մատենագիրներ…., էջ 100:*

[49] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ *Պատմութիւն Հայոց, Ե., 1996:*

[50] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան *Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ., 1885:*

[51] Շապուհ Բագրատունի, *էջ 189:*

[52] *Նույն տեղում (ընդգծումը՝ Ս. Հ.):*

ենթադրել, որ նա պատկանելիս կլիներ գավառի ավանդական տերերի՝ Եսայի Աբու Մուսեի տոհմին և իշխանության գլուխ էր անցել IX դարը բոլորող տասնամյակներին: Նրա մասնակցությունը կռվին մյուս հայ՝ Աղձնիքի, Վայոց Ձորի, Տայքի, Տարոնի, Անձևացիների ու Կորդվաց իշխանների[53] հետ մեկտեղ, խոսում է այն մասին, որ նա Հայոց երկրի զորեղ տիրակալներից էր, ուներ բավական ուժեղ և մեծաթիվ հեծելազոր և դրանով էլ մասնակցում էր կռվին: Վասակ իշխանն, անկասկած, կրում էր Սմբատ Ա-ի քաղաքական ազդեցությունը, ուստի և մյուս հայ իշխանների հետ արձագանքել էր թագավորի կոչին և իր զորքերով եկել մասնակցելու նրա ձեռնարկած արշավանքին:

X դ. սկզբներին Ստ. Օրբելյանը հիշատակում է արդեն Եսայի անունով մի ուրիշ իշխանի, որն, ավելի, քան հավանական է, ավագ Եսայու հաջորդներից էր: Սյունյաց արքեպիսկոպոսը պատմում է, որ 906 թ. Տաթևի վանքի նավակատիքին մասնակցել և վանքին տրվող հողային տիրույթների սահմանների մասին որոշումն իրենց ստորագրությամբ հավաստել են Արցախի Գրիգոր, Եսայի և Ատրներսեհ իշխանները[54]: Ուսումնասիրողները փորձել են պարզել հիշյալ Եսայու ինքնությունը և տարբեր հետևություններ արել: Նրանցից Ն. Ադոնցը գտնում է, որ նա նույն ինքը՝ Արցախի քաջազոր իշխան Եսայի Աբու Մուսեն է[55]: Հ. Քյուրտյանը նույնպես մտածում է, թե. «Ապումուսէ ողջ էր 906-ին, երբ Տաթևայ վանքին սահմաններուն վճիռը կը ստորագրեր»[56]: Մ. Բարխուտարյանցը, Եսայի իշխանի տոհմածառը կազմելիս, նրանում չի ընդգրկել այս Եսայուն[57], ինչը նշանակում է, որ նա վերջինիս չի համարում մեծ իշխանի հաջորդներից: Նմանապես և՝ Բ. Ուլուբաբյանը: Անտեսելով կրտսեր Եսայուն՝ նա գրում է. «Եսայի իշխանի հետագաներից հայտնի են Մովսես որդին, որը հոր աքսորվելուց հետո մնաց և տիրություն արեց Դիզակին և շրջականերին, Մովսեսի որդիներից՝ Դիզակի Գագիկ թագավորը, իշխանադուստր Սոփին և Գորոզ բերդի տեր Վաչագան իշխանը»[58]. վերջին երեքին նա համարում է մեծ իշխան Եսայու թոռներ[59]: Ս. Բարխուդարյանը, ինչպես տեսանք, այս Եսայուն համարում է իր ավագ անվանակցի թոռը[60]:

Միանգամից ասենք, որ ճիշտ չէ հիշատակված Եսայիներին նույնացնելը: Սխալն այն է, որ հաշվի չի առնվել IX դ. 30-40-ական թվականներին արդեն հասուն տարիքի ու համբավի հասած Եսայի իշխանի ու 906 թ. գործող Եսայու միջև եղած ժամանակագրական այնքան զգալի տարբերությունը (շուրջ 75 տարվա), որ բացառում

---

[53] *Նույն տեղում:*

[54] *Պատմութիւն նահանգին* **Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց,** *Թիֆլիս, 1910, էջ 324:*

[55] **Ադոնց Ն.,** *Բագրատունյաց փառքը, Երկեր, հ. Ա, էջ 517, ծան. 1:*

[56] **Քիւրտեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 139:*

[57] **Բարխուտարեանց Մ.,** *Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 131:*

[58] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 63:*

[59] *Նույն տեղում, էջ 64:*

[60] **Բարխուդարյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 57:*

է ամեն տեսակի նույնացում: Ճիշտ չեն նաև Մ. Բարխուտարյանցն ու Բ. Ուլուբաբյանը՝ կրտսեր Եսայուն տոհմացանկից դուրս մղելով: Այս պարագայում էլ Եսայի Աբու Մուսեի Մովսես որդու անմիջական հաջորդ դառնում է ցանկում նրանից հետո նշված Գագիկ թագավորը, որով ավելի է մեծանում տարիների տարբերությունը վերջիններիս միջև և, հասնելով գրեթե 150 տարվա (855-1000 թթ.), անհնար դարձնում նրանց անմիջական կապը: Մինչդեռ կրտսեր Եսայու ընդգրկմամբ ինչ-որ չափով լրացվում է այդ բացը և վերականգնվում շարքի հաջորդականությունը: Հետևաբար, նրա տեղը ցանկում իրական է, և դրանում կասկածելու հարկ չկա:

Եսայի Աբու Մուսեի սերունդներից էր նաև Անանիա Մոկացու «Թղթում» հիշատակված Գորոզուաց իշխան Վաչագանը[61]: Այստեղ նա հանդես է գալիս որպես Գորոզի տեր, և դրանով ամեն ինչ ասված է: Գրեթե նույն ժամանակների և նույն կողմերի համար, Վաչագան անունով մի թագավոր է հիշատակում Մատթեոս Ուռհայեցին[62]:

Արաբ մատենագիր Իբն Հաուկալն էլ, իր հերթին, արաբներին հարկատու իշխանների թվում հիշում է Վաչական (Վաշական իբն Մուսա) անունով մի իշխանի, որը Ջուրզի տերն էր և 955 թ. սահմաններում արաբներին երկու հարյուր հազար դիրհեմ հարկ էր վճարում[63]: Անկասկած, հիշյալը Անանիա Մոկացու և Մատթեոս Ուռհայեցու Վաչագանն է, իսկ Ջուրզը՝ Գորոզը (հմմտ. Գանձակ-Ջանզա, Գարդման-Ջարդաման, Գուրզան-Ջուրզան և այլն): Ն. Ադոնցը, ընդունելով հանդերձ Վաշական-Վաչագան (նրա գրքում՝ Վաշաղիա իբն Մուսի) անվանց նույնությունը, նրան համարում է Ուտիքի Մովսես իշխանի որդին[64]: Սակայն սխալվում է մեծ գիտնականը: Գորոզի բերդը գտնվում էր «մերձ ի լեառն Քշիթ (կարդա՝ Քթիշ - Ս. Հ.)»[65], այսինքն՝ Արցախում, և նրա տեր Վաչագան - Վաշականը ոչ մի առնչություն չէր կարող ունենալ Ուտիքի հետ: Հետևաբար, լինելով Արցախի և Գորոզի տեր, նա անպատճառ կլիներ Եսայու տոհմից, բայց ոչ թե նրա Մովսես որդու, ինչպես ենթադրվել է[66], այլ հետագա սերունդներից, նույնպես Մովսես անվամբ տոհմակցի, անմիջական ժառանգը: Դա ավելի ակնառու է դառնում, երբ խնդրին մոտենում ենք ժամանակագրական առումով: Այն երկարուձիգ տարիները, որոնք ընկած են Եսայու Մովսես որդու (մոտ 855 կամ 857-859 թթ.) և Վաչագանի (հիշատակվում է 955 թ.) միջև, բնականորեն բացառում են նրանց հայր ու որդի լինելու ենթադրությունը: Դրա հետ մեկտեղ պարզվում է նաև, որ Վաչագանը ոչ թե ավագ Եսայու թոռն էր[67], այլ կրտսեր Եսայու ծոռը: Գորոզուաց այս

---

[61] **Անանիա Մոկացի,** *Թուղթ Ա, էջ 144:*

[62] **Մատթեոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 8:*

[63] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում (տե՛ս Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 203):*

[64] **Ադոնց Ն.,** *Բագրատունյաց փառքը, էջ 523:*

[65] **Թովմա Արծրունի,** *էջ 79:*

[66] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 64:*

[67] *Նույն տեղում:*

իշխանը ճանաչված անձնավորություն էր, 958 թ. Խաչենում գումարված եկեղեցական ժողովի մասնակից և, լինելով Եսայան տոհմից, իր պատվավոր տեղն ուներ տոհմացանկում:

Գորոգի իշխանական տան աչքի ընկնող դեմքերից էր Գագիկը, որը X-XI դդ. սահմանագլխին արդեն հանդես էր գալիս « թագավոր» տիտղոսով: Դա է մատնանշում տեղիս «Կարմիր եղցի» կոչվող եկեղեցու պատուհանի պսակի վրայի արձանագրությունը, որը 1000 թ. թողել է իշխանադուստր Սոփին՝ Գագիկի քույրը՝ որպես առհավատչյա եկեղեցին իր կողմից կառուցված լինելու մասին: Հինգ տողից բաղկացած վիմագրական այս տվյալը ժամանակին հրատարակել է Մակար եպիսկոպոսը[68], իսկ մեր օրերում՝ Ս. Բարխուդարյանը: Այն ընթերցողին ենք ներկայացնում ըստ վերջին հրատարակության. «Ի: ՆԽԹ: /1000/ թվ (ին) Հ (այոց), եւ ի թագաւորութեանս Տ. Գագիկա, որդո Մուսէի. ես Սոփի[69] դուստր Մուսէի շինեցի տուն ԱՅ ի փրկութիւն հոգւո իմո եւ ծնողաց իմոց»[70]: Այստեղ Գորոգի տերը «թագավոր» է կոչվում, որ նորություն է տոհմի անդամների պատվանունների մեջ: Այս բարձր տիտղոսն, անշուշտ, խոսում է կառավարող իշխանական տան հզորության մասին, որն էլ առիթ է ծառայել Գագիկ իշխանին «թագավոր» կոչելու: Արձանագրությունը ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ տրվում է Գագիկի ու նրա քրոջ՝ Սոփիի հոր անունը՝ Մուսե, որը նույն Մովսես անունն է: Վերջին հանգամանքը ևս թյուրիմացություն է առաջացրել ուսումնասիրողների մեջ: Բ. Ուլուբաբյանը, ելնելով նրա՝ Մուսե անունից, դարձյալ կարծում է, որ նա Եսայի Աբու Մուսեի Մովսես որդին է, իսկ Գագիկն ու Սոփին, ուրեմն, նրա թոռները[71]: Հետազոտողը նման միտք արտահայտել էր նաև Վաչագանի կապակցությամբ, որ, սակայն, ժամանակահատվածի մեծ տարբերության պատճառով հերքվեց: Ներկա պարագայում այդ տարբերությունն առավել է մեծանում և, նախորդի նման, ոչ մի եզր չի թողնում նրանց հայր ու որդի, իսկ Վաչագանին, Գագիկին ու Սոփիին էլ՝ Եսայի Աբու Մուսեի թոռներ համարելու համար: Մնում է ընդունել, որ արձանագրությունում հիշատակվող և որպես Գագիկի ու Սոփիի հայր նշված Մովսեսը Եսայան տոհմի ուշ շրջանի ներկայացուցիչ էր և պետք է գահակալած լիներ, հասկանալի է, նախքան որդին՝ Գագիկը:

Այսպիսով, ի մի բերելով վերոբերյալ աղբյուրագիտական տվյալները՝ կունենանք Գորոգի իշխանական տան տոհմածառը (հիմնադրումից մինչև XI դ.) հետևյալ տեսքով.

Եսայի Աբու Մուսե, Հովսեփ երեցի որդին: Իշխել է մինչև 855 թ.:
Մովսես (Մուսե), որդին: Իշխել է 857/859 թվականներից:

---

[68] **Բարխուտարեանց Մ.,** *Արցախ, էջ 79,* **նույնի՝** *Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 131:*

[69] *Մ. Բարխուտարեանցի մոտ «Սոփին» փոխված է «Ոսկիի» (տե՛ս, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 131, ծան. 2):*

[70] *Դիվան V, էջ 173:*

[71] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 64:*

Եսայի: Մովսեսի որդին: Հիշատակվում է 906 թ.:

Վասակ, Գորոզի իշխան: Հայոց Սմբատ Ա արքայի (890-914 թթ.) զինակիցը հայ-վրաց-աբխազական կռվում:

Մովսես (Մուսե): Հիշատակվում է որպես Վաչագան-Վաշականի հայր:

Վաչագան, (Վաշական Իբն Մուսե): Մովսեսի որդին: 955 թ. հիշատակվում է արդեն իբրև Գորոզի (Ջուրզի) տեր: Խաչենի եկեղեցական ժողովի (958 թ.) մասնակից:

Մովսես (Մուսե), Գագիկ թագավորի և իշխանադուստր Սոփիի հայրը: Վաչագանի որդին, որ, հայերի սովորության համաձայն, կրել է պապի անունը: Իշխել է մինչև X դ. վերջին տասնամյակները:

Գագիկ թագավոր: Նախորդի որդին: Քույրը՝ Սոփին: Հիշատակվում են միասին՝ 1000 թ.:

Սրանք են այն իշխանները, որոնք հաջորդելով միմյանց՝ իշխանությունը տարան վերելքի ուղիով: Բոլոր նշվածներն էլ պատմական անձեր են, ինչը հաստատվում է սկզբնաղբյուրների տեղեկություններով ու իրենց կատարած գործերով: Նրանք, հիմնադրին չհաշված, յոթն են և, յուրաքանչյուրի համար 20-25 տարվա տիրապետության շրջան ենթադրելու դեպքում, լիովին տեղավորվում են Աբու Մուսեից հետո մինչև թագավորության հասած Գագիկն ընկած՝ շուրջ 150-ամյա ժամանակաշրջանի մեջ, ինչն ինքնին ապացուցում է ցանկի իրական լինելը:

Եսայի Աբու Մուսեի հիմնադրած Գորոզի իշխանությունը կազմավորման հենց սկզբից կառավարվում էր սեփական տոհմիկ իշխաններով և դրանով իսկ կայուն դիրք ու առաջխաղացում ապահովում տոհմակիցների համար: Այն նաև իր հաստատուն տեղն ուներ Արցախ աշխարհի իշխանական համակարգում:

Այսպիսով, IX դ. սկզբներին Արցախում բարձրանում են Սահլ Սմբատյանի, Ստեփանոս Աբլ-Ասադի և Եսայի Աբու Մուսեի իշխանությունները, որոնք, տարածաշրջանի կառավարման դեկը վերցնելով իրենց ձեռքը, դառնում են երկրամասի պատվարը անվտանգության ու անկախության համար մղվող պայքարում: Դրանք իրենց ներքին կառուցվածքով ու կառավարման համակարգով նաև հիմք ու նախադրյալներ են ստեղծում հետագայում, պետականության տարբեր պարունակող մելիքությունների առաջացման համար:

АРЦАХСКИЙ МИР ПОСЛЕ
УПРАЗДНЕНИЯ ДИНАСТИИ МИҺРАНИДОВ

СВАЗЯН Г. С.

Резюме

В начале IX в. в Арцахе на исторической арене появились княжества Саһла Смбатяна, Абл Асада Степаноса и Есайи Абу Мусе, взявшие в свои руки бразды правления и возглавившие борьбу за независимость Арцаха. Эти княжества по своей внутренней структуре и системе управления послужили основой для будущих меликств с зачатками государственности.